«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՍԿ

ԳՈՐԻՍԻ ՊՐՈՖ. Խ. ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2020

ՆԱԽԱԲԱՆ

Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ կամ հաստատություն) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրի թիվ 5 նախապայմանի շրջանակներում:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Սույն զեկույցն անդրադառնում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանը՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշների ու չափորոշիչների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 9

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 9

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 9

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 13

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 13

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 15

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 18

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 20

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 22

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 24

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 26

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 29

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 31

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 33

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 35

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 36

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 36

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 37

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 39

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 41

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 41

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 41

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Վարչական և ուսումնաօժանդակ կազմի հասանելիությունը ուսանողներին և ուսանողականետրոն մոտեցումը,
2. Կրթական պետական չափորոշիչներին համապատասխան ՄԿԾ-ների առկայությունը,
3. ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի առկայությունը,
4. ուսանողների հավաքագրման, ընտրության ու ընդունելության մեխանիզմների առկայությունը,
5. կարիերային նպաստող ծառայությունների առկայությունը,
6. տեղական կազմակերպությունների հետ շարունակական համագործակցությունը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1. Առաքելության և նպատակների իրականացման գնահատման համար անհրաժեշտ ցուցիչների բացակայությունը,
2. ներքին և արտաքին շահակիցների ազդեցության ցածր մակարդակը որոշումների կայացման վրա,
3. տվյալների հավաքագրման մեխանիզմների բացակությունը,
4. կառավարչական որոշումներ կայացնելիս ոչ հստակ տվյալների վրա հիմնվելը,
5. արտաքին միջավայրի ուսումնասիրման մեխանիզմների բացակայությունը,
6. մարդկային ռեսուրսների պլանավորման և մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմների անկատարությունը,
7. կրթական և ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների ոչ բավարար լինելը,
8. հասարակությանը արժեքների և գիտելիքների փոխանցման հստակ մեխանիզմների բացակայությունը,
9. արտաքին կապերի խրախուսումն ապահովող մեխանիզմների և ենթակառուցվածքների բացակայությունը,
10. որակի ապահովման համակարգի անկատարությունը,
11. որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության պակասը,
12. որոշումների կայացման գործընթացներում որակի ապահովվման համակարգի ազդեցության բացակայությունը:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1. մշակել ռազմավարական նպատակների իրականացման և գնահատման հստակ ցուցիչներ,
2. ապահովել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը ռազմավարական նպատակների սահմանման գործընթացում,
3. մշակել և ներդնել ռազմավարության գնահատման և վերանայման հստակ մեխանիզմներ,
4. վերանայել ֆինանսական պլանավորման և ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ապահովելու ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակների իրականացումը,
5. մշակել և ներդնել ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործիքակազմ,

Կառավարումն ու վարչարարությունը

6. կառավարչական որոշումները կայացնելիս առաջնորդվել սահմանված էթիկայի կանոններով,
7. մշակել կառավարման մարմինների գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ,
8. որոշումներ կայացնելիս հիմնվել նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա,
9. ստորաբաժանումների կարճաժամկետ պլանները համապատասխանեցնել ռազմավարական ծրագրին և ըստ դրա մշակել գործընթացների միջնաժամկետ իրականացման պլաններ,
10. կանոնակարգել հաստատության վրա ազդող գործոնների ուսումնասիրման գործընթացը՝ ապահովելով համապատասխան հիմքերի առկայությունը,
11. հաստատության ուսումնական և վարչարարական գործընթացները իրականացնել որակի կառավարման սկզբունքով,
12. ներդնել հաստատության գործունեության մասին քանակական և որակական տեղեկատվության հավաքագրման հստակ մեխանիզմներ և որոշումներ կայացնելիս հիմնվել դրանց վրա,
13. ապահովել հաստատությունում գործող խորհուրդների, հանձնաժողովների պատշաճ և կանոնակարգված գործունեությունը,

Մասնագիտության կրթական ծրագրերը

14. մշակել ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմներ,
15. ՄԿԾ-ների մշակման գործընթացում ներգրավել ուսանողներին,

16. ներդնել ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմներ,
17. իրականացնել համեմատություն համանման կրթական ծրագրերի հետ,
18. մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման և շարունակական բարելավման քաղաքականություն և ընթացակարգեր,
19. հստակեցնել ուսանողների գնահատման քաղաքականությունը՝ համապատասխանեցնելով ուսումնառության և դասավանդման մեթոդներին,
20. յուրաքանչյուր կրթական ծրագրի մակարդակում ապահովել գնահատում-վերջնարդյունքներ կապը,
21. հստակեցնել մասնագիտությունների պրակտիկաների ժամանակահատվածները, ուսանողների կողմից ներկայացվող փաստաթղթերն ու պրակտիկաների գնահատման մեթոդաբանությունը,

Ուսանողները

22. խթանել ուսանողների ներգրավվածությունը իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացներում,
23. պարբերաբար վերանայել ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները և կատարելագործել դրանք,
24. մշակել և ներդնել ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմներ,
25. ձևավորել ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ,

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

26. մշակել և ներդնել դասախոսական կազմի կարիքների վերհանման մեխանիզմներ,
27. ներդնել դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական զարգացման մեխանիզմներ,
28. ձևավորել դասախոսական կազմի երիտասարդ կադրերով ապահովման քաղաքականություն՝ ապահովելու դասախոսական կազմի կայունությունը,
29. մասնագիտությունների ուսումնական պլաններում ընդգրկված առարկաների/մոդուլների համար ընտրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ,

Հետազոտությունը և զարգացումը

30. սահմանել քոլեջի հետազոտական ուղղությունները՝ հաշվի առնելով քոլեջի առանձնահատկությունները,
31. մշակել և ներդնել հետազոտության իրականացումը խրախուսող քաղաքականություն,
32. ներդնել իրականացված հետազոտության արդյունքները դասավանդման և ուսումնառության գործընթացներում,

33. մշակել և ներդնել ռեֆերատների և կուրսային աշխատանքների իրականացման և դրանց գնահատման հստակ չափանիշներ,

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

34. ապահովել մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր՝ համապատասխան մասնագիտությունների չափորոշիչների և ուսումնական պլանների պահանջների,
35. հատկացնել համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար,
36. մշակել և ներդնել կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն,
37. մշակել և ներդնել տեղեկատվությունը կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ,
38. հատուկ կարիքներ ունեցող ուսանողների, աշխատակիցների համար ապահովել համապատասխան պայմաններ,
39. մշակել և ներդնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ,

Հասարակական պատասխանատվությունը

40. մշակել և ներդնել հաշվետվողականության ընթացակարգեր,
41. քոլեջի կայքի, սոցիալական հարթակների միջոցով ապահովել ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը,
42. արդիականացնել կայքի բաժինները և պարբերաբար թարմացնել տեղեկատվությունը,
43. կայքի և սոցիալական էջերի համար իրականացնել այցելությունների, հետաքրքրվածության վերլուծություններ և կիրառել դրանք որոշումների կայացման գործընթացներում,

Արտաքին կապերը և միջազգայնացումը

44. մշակել և ներդնել արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր,
45. ձևավորել արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածք,
46. իրականացնել ներքին շահակիցների օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելուն ուղղված գործընթացներ,

Որակի ներքին ապահովման համակարգը

47. որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով տրամադրել մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,

48. ապահովել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում,
49. պարբերաբար վերանայել որակի ներքին ապահովման համակարգը, քաղաքականությունը, ընթացակարգերը,
50. ապահովել քոլեջի գործունեության թափանցիկությունը, այդ թվում նաև կայքի և սոցիալական էջերի միջոցով,
51. ստեղծել նպաստավոր պայմաններ որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման համար,
52. ապահովել քոլեջում ընթացող գործընթացների մասին տեղեկատվության թափանցիկությունը հանրության առավել լայն շերտերի համար:

Ծաղիկ Հովհաննիսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

26 փետրվար 2020

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից[1].

1. **Ծաղիկ Հովհաննիսյան՝** տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտական քարտուղար,
2. **Ախիմ Ալբրեխտ՝** Եվրոպական և միջազգային բիզնես իրավունքի պրոֆեսոր, Վեստֆալիայի համալսարան, Միջազգային բիզնեսի իրավունքի, միջին մասնագիտական կրթության, համալսարանների ռազմավարական զարգացման, հավատարմագրման փորձագետ,
3. **Գայանե Արաբաչյան՝** Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն,
4. **Սերգեյ Ավանեսյան՝** Գորիսի պետական քոլեջ, ուսումնական գծով փոխտնօրեն, դասախոս,
5. **Արթուր Դավթյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Մերի Բարսեղյանը:

Թարգմանությունը կատարել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի դասախոս Նարինե Գիշյանը:

Փորձագիտական խմբի անդամները, համակարգողը, թարգմանիչը ստորագրել են գաղտնիության և շահերի բախման բացառման հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի ինքնակենսագրականները

ՈԱԱԿ-ի Քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը: ՈԱԱԿ-ը կայացրել է դիմում-հայտի ընդունման մասին որոշում և կազմել ու հաստատել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Նախապատրաստական փուլ

Քոլեջը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ը կազմակերպել է ինքնավերլուծության թարգմանությունը՝ արտաքին մասնագետի ներգրավմամբ:

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը և կից փաթեթը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Քոլեջի ինքնավերլուծությունը և կից փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել է հավատարմագրման գործընթացի համակարգողների դրական կարծիքը ստանալուց հետո:

Ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով պատասխանատուների կողմից իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. հավատարմագրման գործընթաց, փորձագիտական աշխատանքի առանձնահատկություններ, փորձագետի էթիկայի և վարքագծի կանոններ,
2. ինստիտուցիոնալ ինքնավերլուծության նախնական գնահատում պրակտիկայից վերցված օրինակների միջոցով,
3. փորձագիտական այց դերային խաղերի միջոցով,
4. փորձագիտական զեկույցի պատրաստում:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում: Ըստ ձևաչափի՝ պատրաստվել է լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև պարզաբանման ենթակա խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և գործընթացի համակարգողները փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել են փորձագիտական այցի ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ

[2] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույցը

հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

Քոլեջի աշխարհագրական դիրքի պատճառով նախնական այցը տեղի է ունեցել հեռախոսազրույցի միջոցով: Զրույցի արդյունքում վերջնականացվել է այցի ժամանակացույցը, պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձագիտական խմբին տրամադրվող սենյակի, հանդիպումների դահլիճի վերաբերյալ, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2020թ. հունվարի 13-ից 15-ը ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, հաստատության ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնվել են հետագա քայլերը:

Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը և թարգմանիչը:

Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, այդ թվում բաց հանդիպումը, որին մասնակցել են վարչական, դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչներ, տարածաշրջանում գործող դպրոցների տնօրեններ, համայքի բնակիչներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել հաստատության տարբեր ստորաբաժանումներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

---

[3] Հավելված 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

[4] Հավելված 4. Ուսումնասիրված ռեսուրսներ

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:** Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական այցից հետո փորձագիտական խումբը քննարկումների արդյունքում պատրաստել է փորձագիտական զեկույցը, որը կազմելիս հիմնվել է քոլեջի ինքնավերլուծության գնահատման և փորձագիտական այցի դիտարկումների վրա: Փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ իր ներդրումն է ունեցել զեկույցի պատրաստման աշխատանքներում, ինչպես նաև արձագանքել է ամբողջական տարբերակին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանությունները քոլեջը ներկայացրել է ՈԱԱԿ 2020թ. հունվարի 31-ին: Դիտողությունների վերաբերյալ 2020թ. փետրվարի 11-ին ՈՍԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով քոլեջի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 2020թ.-ի փետրվարի 25-ին:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

26 փետրվար 2020

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի առաքելությունը սահմանված է հաստատության ռազմավարական ծրագրում, որը մշակվել է 2017-2021թթ. համար: Ըստ որի քոլեջն իր առաքելությունն է համարում որակյալ գյուղատնտեսական մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան: Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջը պատրաստում է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությամբ, որակավորումների ազգային շրջանակի 3-րդ, 4-րդ և հավատարմագրված մասնագիտությունների գծով 5-րդ աստիճանի որակավորմամբ միջին օղակի կադրեր՝ նպատակ ունենալով բավարարելու աշխատաշուկայի հարափոփոխ պահանջները՝ նպաստելու ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը և դիմագրավելու ոլորտային նոր մարտահրավերների: Փորձագիտական խումբը գտնում է, որ առկա է աշխատաշուկայի ուսումնասիրման և դրա հիման վրա ՄԿԾ-ների արդիականացման անհրաժեշտություն: Սա կարող է նպաստել նաև տարածաշրջանի համար առավել գրավիչ մասնագիտությունների ներդրմանը և իր սահմանած նպատակների արդյունավետ իրականացմանը:

Ըստ ինքնավերլուծության՝ հաստատությունն իր առանձնահատկությունն է համարում Սյունիքի մարզում միակ միջին և նախնական մասնագիտական կրթական համակարգում գյուղատնտեսական կրթության ծառայություն մատուցող ուսումնական հաստատություն լինելը: Այդուհանդերձ, Սյունիքի մարզում առկա են նաև գյուղատնտեսական և հարակից մասնագիտություններով նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատություններ. Ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղը, Արցախի Հանրապետությունում գործող գյուղատնտեսական քոլեջները (Բերձորի տարածաշրջանում նույնպես նախատեսվում է հիմնել գյուղատնտեսական քոլեջ): Գորիսի գյուղատնտեսական քոլեջը այս հաստատություններին չի դիտարկում որպես մրցակիցներ՝ չմատնանշելով իր առանձնահատկությունները, ինչը կարող է հանգեցնել դիմորդների թվի նվազմանը: Քոլեջը, բացի գյուղատնտեսական մասնագիտություններից, իրականացնում է նաև կրթություն՝ կառավարում, տնտեսագիտություն, հաշվապահություն մասնագիտությամբ, անմիջականորեն չեն առնչվում գյուղատնտեսության ոլորտին: Ուստի, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի առաքելությունը ունի վերաձևակերպման կարիք՝ ներառելով ոչ գյուղատնտեսական մասնագիտությունների առանձնահատկություններն ու պահանջները:

Ըստ ինքնավերլուծության՝ առկա է ռազմավարական պլանի աշխատանքային խումբ, որը քոլեջի առջև դրված խնդիրների լուծման անհրաժեշտությունից և գործունեության ընթացքում ծագող նոր մարտահրավերներից ելնելով, նախանշված ժամկետում կազմում և քոլեջի մանկավարժական խորհրդի և ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ռազմավարական պլանի նախագծի բաղկացուցիչ մասերը, որը հետագայում քննարկվում է ներքին և արտաքին շահակիցների հետ և արված առաջարկությունների հիման վրա կազմում է ռազմավարական պլանի լրամշակված տարբերակը և ներկայացմնում քոլեջի կառավարման խորհրդի քննարկմանը և հաստատմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներքին շահակիցները մասնակցել են ռազմավարական ծրագրի մշակմանը: Այդուհանդերձ, արտաքին շահակիցների ներգրավվածության մակարդակը դեռևս ցածր է և չի կրում համակարգված բնույթ: Հաստատությունում արտաքին շահակիցների կարիքների բացահայտման մեխանիզմներ, ընթացակարգեր և դրանց գնահատման գործիքակազմեր ներդրված չեն:

Ներքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներ են հանդիսանում նաև ամբիոնների, մասնագիտական խորհուրդների, ուսումնամեթոդական, մանկավարժական, ուսանողական խորհուրդների նիստերը, տնօրենի հանդիպումները կոլեկտիվի անդամների և ուսանողության հետ: Հստակ չէ նաև, թե ինչպես են աշխատում ներդրված գործիքակազմերը գործնականում, և գնահատվել է արդյոք այդ մեխանիզմների արդյունավետությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման հստակ քաղաքականություն ձևավորված չէ: Սահմանված չեն առաքելության և նպատակների իրականացման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Տնօրենը ցիկլիկ եղանակով պարբերաբար ներկայացնում է քոլեջի խորհրդին ռազմավարական պլանի, առաքելության ու նպատակների մեջ անհրաժեշտ փոփոխությունները: Փորձագիտական խումբը գտնում է, որ առաքելության և նպատակների քննարկումը քոլեջի շահակիցների առավել լայն շրջանակի հետ, կհանգեցներ վերջիններիս իրականացման արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ, քոլեջում առկա չեն արդյունքում իրականացված փոփոխությունների օրինակներ, և այս գործընթացի արդյունավետության գնահատումը բացակայում է ևս:

Հաշվի առնելով, որ քոլեջի կողմից մշակվել և հաստավել է ռազմավարական ծրագիր, որում սահմանվում է հաստատության առաքելությունը, դրա հետ կապված իրականացվում են գործողություններ՝ որոշակի հաշվետվություններ, որոնք ներկայացվում են քոլեջի խորհրդին, չնայած առկա մի շարք խնդիրների, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ընդհանուր առմամբ բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Քոլեջն իր ռազմավարական խնդիրներից է համարում կառավարման արդյունավետության ու վարչական ծառայությունների որակի բարձրացումը՝ նախատեսելով պահպանել և զարգացնել աշխատակիցների ու սովորողների ակտիվությունն ու նախաձեռնությունը, ապահովել նրանց մասնակցությունը քոլեջի կառավարման գործընթացում: Քոլեջում գործում են կառավարման հետևյալ օղակներն իրենց համապատասխան կանոնակարգերով՝ կառավարման խորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ամբիոններ, մեթոդմիավորումներ, ուսանողական խորհուրդ:

Ըստ ինքնավերլուծության, քոլեջի կառավարման մարմիններում ստորաբաժանումների ղեկավարների, դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը վճռական ձայնի իրավունքով հնարավորություն է տալիս նրանց մասնակցելու իրենց առնչվող բոլոր հարցերի քննարկմանը, ներկայացնելու առաջարկներ և մասնակցելու քվեարկություններին:

Դասախոսական, վարչական անձնակազմը ընդգրկված է քոլեջի կառավարման գործընթացքում, ուսանողները կառավարման օղակներից ընդգրկված են ուսանողական և կառավարման խորհուրդներում, սակայն նրանց գերակշիռ մասը տեղեկացված չէ կառավարման մարմինների առկայության մասին, և չկա համապատասխան ներգրավվածություն: Քոլեջը չունի կառավարման տարբեր մարմիններում ուսանողների, դասախոսների, վարչական աշխատակազմի ներգրավման և ընդգրկվածություն մեխանիզմներն արդյունավետության տեսանկյունից գնահատող և վերլուծող գործիքակազմ, որը նաև թույլ կտար ապահովել կայացված որոշումների թափանցիկությունն ու կբարձրացներ հաշվետվողականության գործընթացները: Քոլեջի կառավարման օղակներից յուրաքանչյուրն իր հաշվետվությունն է ներկայացնում վերադաս օղակին: Վերջնական հաշվետվությունը տնօրենը ներկացանում է հաստատության կառավարման խորհրդին: Սակայն կառավարման օղակների կանոնակարգերի մեջ չկա սահմանված գործիքակազմ, թե ինչպես պետք է ներկայացվեն հաշվետվությունները, ինչ պարբերականությամբ իրականացվող գնահատումների արդյունքներով և ինչ վերադասությամբ:

Ուսումնասիրելով հաստատության կարգերը, կանոնակարգերը, ստորաբաժանումների կանոնակարգերը, ՈՒԽ կանոնադրությունը՝ պարզ է դառնում, որ քոլեջի ուսանողներն ընդգրկված են ուսանողական և կառավարման խորհուրդներում: Կառավարման մյուս օղակներում ուսանողների ձայնն ուղղակի կերպով լսելի չէ[5]:

---

[5] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Քոլեջի դասախոսները ներկայացված են ուսումնամեթոդական, մանկավարժական, ինչպես նաև կառավարման խորհուրդներում: Ըստ նշված խորհուրդների կանոնակարգերի, նրանք հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսական կազմը տեղեկացված չէ ուսումնամեթոդական խորհրդի առկայության մասին:

Հաստատությունն ունի էթիկայի կանոններ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ներքին շահակիցները դրա մասին տեղեկացված չեն, և որոշումների կայացումը չի իրականացվում սահմանված էթիկայի նորմերին համապատասխան:

Քոլեջի պաշտոնական կայքը նոր է գործարկվել, իսկ ֆեյսբուքյան էջը գործում է 2016 թվականի փետրվարի 11-ից, սակայն նկատելի է, որ երկու հարթակներում էլ հրապարակված չեն կառավարման օղակների որոշումներն ու արձանագրությունները, ինչը հնարավորություն կտար ապահովելու քոլեջում իրականացվող գործընթացների թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

Քոլեջն ունի Ռազմավարական ծրագիր, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ այն չի արտացոլում հաստատության հիմնական հավակնությունները: Հաստատության կարճաժամկետ պլանավորումները հիմնականում չեն բխեցվում հաստատության ռազմավարական ծրագրից, իսկ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ միջնաժակետ պլանավորում քոլեջում առկա չէ: Քոլեջի ինքնավերլուծության մեջ նշված է, որ հաստատությունը պարբերաբար ուսումնասիրում է իր գործունեության վրա ազդող գործոնները, ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով քոլեջի շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացվում են հարցումներ՝ պարզելու համար նրանց բավարարվածությունը քոլեջում ուսանողների ստացած գիտելիքներից ու կարողություններից: Սակայն այցի ընթացքում պարզ դարձավ, որ հաստատությունը գործատուների և շրջանավարտների շրջանում չի իրականացնում հարցումներ[6], Ինչը կարող էր նպաստել կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ապահովեր արդյունավետ կապ աշխատաշուկայի հետ:

Քոլեջը չունի մեթոդական ուղեցույց և կանոնակարգեր հաստատության կողմից իրականացվող հարցումների արդյունքերի գնահատման լիարժեք ընկալման համար: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ քոլեջում իրականացվող գործընթացները համակարգված չեն, չկա տարեկան ռիսկերի պլանավորում, իսկ տվյալների հավաքագրման մեխանիզմները թերի են:

Համաձայն հաստատության ինքնավերլուծության, քոլեջում որակի ապահովմանը նպաստող ՊԻԳԲ մեխանիզմը իրագործման որոշ ուղղություններում համարում են արդյունավետ, մի շարք ուղղություններում՝ ոչ, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվող գործընթացները հիմնականում պլանավորման փուլում են, որը չի իրականացվում՝ ըստ գերակա ուղղությունների: Հաստատությունում առկա

[6] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

չեն նաև չափելի ցուցիչներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ գնահատել իրականացված գործընթացների արդյունավետությունը:

Քոլեջի ինքնավերլուծության մեջ նշված է, որ մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման ավելի արդյունավետ ու ճկուն մեխանիզմները մշակման փուլում են և նախատեսվում է կանոնավոր կերպով, տարին մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջում, կատարել նման ինքնավերլուծություններ: Այս ընթացքում քոլեջը որևէ անգամ չի իրականացրել արդյունավետության գնահատում, ինչպես նաև առկա չէ համապատասխան գործիքակազմ և մեխանիզմներ:

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գյուղատնտեսական մասնագիտությունների գծով գործատուների շրջանում անցկացրած գրավոր հարցումները ցույց են տալիս, որ շրջանավարտների տեսական գիտելիքները բարձր են, իսկ պրակտիկ հմտությունների, կարողությունների ձևավորման գործընթացում կան բացթողումներ, որի հետևանքով անհրաժեշտ է գործնական ուսուցման որակի բարձրացման վրա հսկայական աշխատանք կատարել[7]:

Փորձագիտական խմբի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ քոլեջը չունի նաև համապատասխան օբյեկտիվ գործիքակազմ՝ իր հրապարակումների որակը գնահատելու և դրանց ազդեցությունը վերլուծելու համար, որը կարող է վտանգել քոլեջի մասին տեղեկատվության տրամադրման և հաշվետվողականության ապահովման գործընթացները:

Հաշվի առնելով, որ քոլեջում առկա չէ ռազմավարական նպատակների իրականացման համար հստակ պլանավում, քոլեջում իրականացվող գործընթացները որակի կառավարման /ՊԻԳԲ/ սկզբունքով չեն իրականացվում, շահակիցների կարծիքների հավաքագրումը և վերլուծումը չի կրում կանոնակարգված բնույթ, առկա է որոշումների կայացման գործընթացում ուսանողների դասախոսների մասնակցությունը ակտիվացնելու անհրաժեշտություն, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

[7] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի առաքելության մեջ նշված է, որ հաստատությունն ապահովում է աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ կրթական ծառայությունների ճկունությունը: Գորիսի գյուղատնտեսական քոլեջի ռազմավարության հիմնախնդիրների մեջ կարևորվում է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումների իրականացումը՝ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:

Քոլեջը իրականացնում է միջին մասնագիտական կրթություն 6 (Անասնաբուժություն, Գյուղատնտեսության մեքենայացում, Մենեջմենթ/կառավարում, Հաշվապահական հաշվառում, Կաթի, կաթնամթերքի տեխնոլոգիա, Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում) մասնագիտությունների գծով:

Փորձագիտական վերլուծությամբ պարզ դարձավ, որ Գորիսի գյուղտնտեսական քոլեջի առաքելությունը և ներկայացվող ՄԿԾ-ները հիմնականում համահունչ են այն իմաստով, որ ՄՈՒՀ-ի կողմից առաջարկվող ՄԿԾ-ները նպատակ ունեն ապահովելու գյուղտնտեսական մասնագետների պատրաստումը տնտեսության և աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան: Սակայն նկատելի է նաև, որ որոշ մասնագիտությունների ներդրումը քոլեջում չի բխում հաստատության կողմից սակմանված առաքելությունից:

Քոլեջի ուսումնական պլանները և կրթական ծրագրերը կազմված են միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա՝ համապատասխան ՀՀ ՈԱԾ-ին: ՄԿԾ-ների մեջ ներառվող առարկայական ծրագրերը հիմնականում նկարագրված են ՈԱԾ-ի պահանջներից ելնելով:

Վերը նշված մասնագիտությունների ՄԿԾ-ների համար քոլեջում մշակվել են ծրագրային փաթեթներ, որոնք ներառում են յուրաքանչյուր մոդուլի նկարագիրը և վերջնարդյունքները: ՄԿԾ-ների նկարագրերում զետեղված են նաև յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանները: Ծրագրերի վերանայումը հիմնականում իրականացրել է ուսումնական մասը և մասնագիտական ամբիոնները:

Ըստ քոլեջի կողմից ներկայացված ինքնավերլուծության՝ ՄԿԾ-ների փորձի համեմատական վերլուծությունը իրականացնելիս հաշվի են առնվել աշխատաշուկայի և գործատուների ժամանակակից պահանջները: Ուսումնասիրելով քոլեջում առկա կրթական ծրագրերը պարզ է դառնում, որ դրանք հիմնականում տեղայնացված չեն տվյալ տարածաշրջանի համար, ինչպես նաև առկա չէ աշխատաշուկայի պահանջների վերլուծություն, որը հիմք կարող էր ընդունվել ՄԿԾ-ները մշակելիս և բարելավելիս:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները ընդհանրական կերպով ներկայացված են ՄԿԾ-ների նկարագրերում: Սակայն առկա չէ փոխկապակցվածություն

ուսումնառության վերջնարդյունք-ուսուցման մեթոդ-գնահատման մեթոդ ցիկլի միջև: ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը հստակ չէ, որը կարող է խոչընդոտել յուրաքանչյուր մասնագիտացման համար անհրաժեշտ վերջնարդյունքների ձեռքբերումը: Սա նաև կնպաստի ուսանողականետրոն ուսուցմանը:

Քոլեջում ՄԿԾ-ներում առկա խնդիրների վերհանման նպատակով, ինչպես նաև դասընթացների բովանդակության վերջնարդյունքներին միտված՝ դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանությանը վերաբերող գնահատում համակարգային կերպով չի իրականացվել, հետադարձ կապի մեխանիզմները դեռևս ձևավորման փուլում են:

Գորիսի գյուղատնտեսական քոլեջում կիրառվում է մոդուլային ծրագրերի և մասնագիտությունների գնահատման ընթացակարգ: Ըստ ընթացակարգի՝ քոլեջում գնահատումը իրականացվում է՝ ըստ ՄԿԾ-ների ուսումնառության վերջնարդյունքների: Սակայն ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցի ընթացքում գնահատման համակարգային մոտեցումը դեռևս ձևավորման փուլում է: ՄԿԾ-ներում նկարագրված չեն նաև պրակտիկայի պահանջները, խնդիրները, առաջադրանքների պահանջները և ծավալները և ըստ սրանց նաև գնահատման չափանիշները:

Քոլեջում դեռևս մշակված չեն ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմներ:

Քոլեջում բոլոր մասնագիտությունների համար գրված մոդուլային ծրագրերը համապատասխանեցված են ընդունված մոդուլային պետական պահանջներին, որոնք ձևակերպված են միջազգային նորմերից ելնելով: Ինչպես երևում է ինքնավերլուծությունից մոդուլային ծրագրերը ժամանակ առ ժամանակ մշակվում և վերանայվում են համապատասխան մասնագիտական ամբիոններում: Այցի ընթացքում պարզվեց, որ մոդուլային ծրագրերի վերանայումը պարբերաբար և համակարգված չի կատարվում:

Քոլեջում դասախոսների շարժունության դեպքեր դեռևս չեն գրանցվել: Ուսանողների և դասախոսների շարժունությանը խոչընդոտող հիմնական խնդիրներից մեկը օտարալեզու ՄԿԾ-ների և դասընթացների բացակայությունն է, ինչպես նաև անգլերենի իմացության բարելավմանն ուղղված միջոցառումների բացակայությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը ունի մոդուլային ծրագրերի և մասնագիտությունների ուսումնական պլանների մշակման, հաստատման, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգ: Մինչև 2017թ□ քոլեջի կրթական ծրագրերի որակի ապահովման գործառույթը հիմնականում իրականացրել է կառավարման խորհրդը, որտեղ պարբերաբար քննարկվել են գործող մոդուլային ծրագրերի և առարկայական ծրագրերի հետ կապված հարցերը: 2017թ -ին քոլեջում ստեղծվել է Որակի ապահովման կենտրոն, որը ապահովում է կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգում դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին:

Այցի արդյունքում պարզ դարձավ, որ որակի ապահովման կենտրոնը քոլեջում չի գործում և ՄԿԾ-ների բարելավմանն ուղղված գործընթացներ ներկայումս չեն իրականացվում: Ընդ որում, մշտադիտարկման այդ փաստաթուղթը առավելապես ընդհանրական է, նկարագրում է ՄԿԾ-ների մշակման մեթոդաբանությունը և չի պարունակում հստակ ռազմավարություն: Արտաքին շահակիցների կողմից ՄԿԾ-ների արդյունքը գնահատող մեխանիզմը ՊՈՀ եզրակացություններն են:

Չնայած այն բանին, որ առկա է քոլեջի կրթական ծրագրերը տարածաշրջանի պահանջներին համապատասխանեցնելու, կրթական ծրագրերի համակարգված վերանայման անհրաժեշտություն գործատուների պահանջների հաշվի առնմամբ, հաշվի առնելով, որ քոլեջի կողմից իրականացվող կրթական ծրագրերը և ուսումնական պլանները ընդհանուր առմամբ կազմված են միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների հիման վրա՝ համապատասխան ՀՀ ՈԱԾ-ին, բոլոր մասնագիտությունների համար գրված մոդուլային ծրագրերը համապատասխանեցված են ընդունված մոդուլային պետական պահանջներին, իրականացվող կրթական ծրագրերը /բացառությամբ մի քանիսի/ ընդհանուր առմամբ բխում են հաստատության որդեգրած առաքելությունից, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ընդհանուր առմամբ բավարարում է չափանիշ 3-րդի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի գյուղատնտեսական քոլեջում՝ ըստ սահմանված ժամանակացույցի, ուսանողների հավաքագրման նպատակով, կազմակերպվում են այցեր տարածաշրջանի դպրոցներ, ինչպես նաև, արդեն ավանդույթ է դարձել յուրաքանչյուր տարվա մայիսի 11-ին կազմակերպել մասնագիտությունների օր, որի ժամանակ ներկայացվում են քոլեջի մասնագիտությունները: Քոլեջն ունի մասնագիտական և ճանաչողական բուկլետներ, որոնք թողարկվել են արտաքին շահակիցների օգնությամբ: Քոլեջում ուսանողների ընդունելությունը իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրակացվող ընդունելության կարգի:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում ուսանողների կրթական կարիքները վեր հանվում են հանդիպումների և միջանցքում տեղակայված արկղիկի միջոցով: Քոլեջը նշում է, որ հարցված ուսանողների 95%-ը տեղյակ է քոլեջի կրթական ծրագրերի մակարդակից և լաբորատորիաներից: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս

պլանավորում է արկղիկ տեղադրել, իսկ ուսանողների շրջանում ՄԿԾ-ների վերաբերյալ հարցումները պարբերական բնույթ չեն կրում: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ներդնելու ուսանողների կրթական կարիքների պարբերաբար վերհանման մեխանիզմներ, ինչը թույլ կտա բացահայտել առկա խնդիրները և դրանք հաշվի առնել ՄԿԾ-ները վերանայելիս:

Քոլեջում առկա չէ լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների իրականացման հստակ ժամանակացույց, սակայն քոլեջի դասախոսական և վարչական կազմը մշտապես հասանելի է ուսանողների համար, ինչը փոխվստահության ու համագործակցության միջավայր է ստեղծում քոլեջում: Ըստ քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության՝ քոլեջում իրականացված հարցման արդյունքում պարզ է դարձել, որ ուսանողների 70%-ը օգտվում է և բավարված է վարչական ծառայություններից, իսկ ուսանողների 15%-ը տեղյակ չէ վարչական աշխատակազմի գործունեությունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել ուսանողների կարիերային նպաստելու ծառայությունների ներդրման ուղղությամբ: Քոլեջում ստեղծվել է կարիերայի կենտրոն, որը նպատակ ունի աջակցել ուսանողներին իրենց կարիերան ստեղծելու գործում: Քոլեջի կողմից ուսանողներին կենտրոնի մատուցած ծառայությունների բավարարվածության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համար կազմվել է հարցաթերթիկ, ապա անանուն եղանակով իրականացրել հարցում: Գործատուների հետ համագործակցության նպատակով քոլեջը կնքել է պայմանագրեր գործատուների հետ՝ կենտրոնի գործունեությունը էլ ավելի թիրախային դարձնելու նպատակով: Սակայն փորձագիտական այցի ընթացքում նույնպես պարզ դարձավ, որ ուսանողների դեռևս ցածր տոկոսն է տեղեկացված կենտրոնի գործունեության մասին, ինչը հնարավորություն կտար առավել շատ տեղեկացնել ուսանողներին և շրջանավարտներին ոլորտում առկա աշխատանքի հնարավորությունների մասին, ինչպես նաև ստեղծել քոլեջ-աշխատաշուկա ամուր կապեր:

Ուսանողները վերջին հինգ տարիներին ընդգրկված չեն եղել քոլեջի համար գերակա հետազոտական աշխատանքներում, ինչպես նաև ուսանողները չեն ունեցել իրենց հեղինակային հետազոտական աշխատանքները: Սակայն փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում կազմակերպվում են ուսանողների հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին մասնակցելու տարբեր սեմինարների ու քննարկումների: Սակայն ուսանողների ուսումնառությանը կապակցող մեխանիզմների առկայության կարիք քոլեջում դեռևս կա:

Քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության մարմինը ուսանողական խորհուրդն է, որը գործում է իր կանոնադրության համապատասխան: Փորձագիտական այցի ընթացքում էլ պարզ դարձավ, որ ուսանողները տեղեկացված են ուսանողական խորհրդի աշխատանքների մասին: Սակայն նկատելի է, որ ուսանողական խորհուրդը հիմնականում զբաղվում է տարաբնույթ միջոցառումների կազմակերպմամբ: Ուսանողների իրավունքների խախտման դեպքեր հիմնականում չեն արձանագրվել, իսկ առաջացած խնդիրները հիմնակնում լուծում են ստացել տնօրենի, փոխտնօրենների և դասախոսների աջակցությամբ:

Քոլեջի ինքնավերլուծության համաձայն՝ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մատուցման որակի ապահովման և գնահատման քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ քոլեջում առկա չեն, սակայն քոլեջը նախատեսում է մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ:

Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման, ընդունելության մեխանիզմներ, ուսանողները հնարավորություն ունեն դիմելու դասախոսներին ու վարչական անձնակազմին, ստանալու աջակցություն, ուսանողները ընդհանուր առմամբ բավարարված են քոլեջում մատուցվող ծառայություններից, քոլեջում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 4-ի պահանջները, սակայն մատուցվող կրթական և այլ ծառայությունների որակի ապահովման և գնահատման մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն կա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի գյուղատնտեսական քոլեջում մարդկային ռեսուրսների ներգրավման և կառավարման հիմքում ընկած են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, քոլեջի կանոնադրությունը և քոլեջի ներքին կարգապահական կանոնները: Քոլեջն ունի մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ անձնակազմեր: Քոլեջի մանկավարժական կազմում ընդգրկված են դասախոսները և արտադրական ուսուցման վարպետները: Ըստ քոլեջի կանոնադրության՝ մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում աշխատում են 37 դասախոս, որոնցից 27՝ հիմնական, 1՝ ժամավճարային, 4՝ համատեղությամբ, 5՝ ներքին համատեղությամբ: Քոլեջում առկա է մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգ, տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, պատասխանատվության ենթարկելու ինչպես նաև պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգ:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգը չի գործում, դասախոսները դրա մասին տեղեկացված չեն:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի իրավունքներն ու պատասխանատվությունները ամրագրված են աշխատանքային պայմանագրում և պաշտոնի անձնագրերում:

Քոլեջը իր կրթական ծրագրերի համար չի սահմանել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՊԴ կազմի պահանջներ են համարվում աշխատողի բազային կրթությունը և որակավորումը, աշխատանքային փորձը, դասավանդման կամ արտադրական փորձը: Քոլեջում գործող կարգերը և ընթացակարգերը հնարավորություն չեն տալիս ապահովել հետադարձ կապ և գնահատել թե ինչպես են գործում դասախոսների մասնագիտական որակին ներկայացվող պահանջների սահմանման մեխանիզմները և արդյունավետ են արդյոք դրանք: Ինչպես նաև փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսի ընդունելության համար չի կիրառվում մրցույթը, որոշ դեպքերում դիմորդներն անցնում են փորձաշրջան, սակայն համընդհանուր կիրառելի չափանիշներ առկա չեն:

Ըստ ինքնավերլուծության՝ դասախոսական կազմի գնահատման համար քոլեջում իրականացվում են դասալսումներ և ուսանողների շրջանում հարցումներ, որոնք, սակայն կատարելագործման կարիք ունեն:

Ըստ քոլեջի ինքնավերլուծության Որակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվել է դասախոսական անձնակազմի գործունեության գնահատում՝ ուսանողների գրավոր կարծիքների, դիմում – բողոքների քննարկումների հիման վրա: Այցի ժամանակ քոլեջի կողմից ներկայացվեցին ուսանողների շրջանում իրականացվելիք հարցումների հարցաթերթիկի օրինակներ միայն: Կոնկրետ կատարած հարցումների օրինակները բացակայում էին:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը փորձում է հարցումների միջոցով գնահատել դասավանդողների ներքին և արտաքին կարիքները, սակայն հարցումների համար հստակ մշակված մեխանիզմներ դեռևս չկա: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ նաև, որ հարցումների և դասալսումների արդյունքում չեն բացահայտում դասախոսական կազմի խնդիրները և դասախոսական կազմը հիմնականում վերապատրաստում է անցնում «ՄԿՈՒԶԱԿ» – ի կողմից կազմակերպվող դասընթացների միջոցով:

Քոլեջի դասախոսների հիմնական մասը ունի բարձրագույն կրթություն: Կրթական ծրագրերի խնդիրներն ու նպատակները իրագործելու անհրաժեշտությունից ելնելով քոլեջը վերջին տարիներին համալրել դասախոսական անձնակազմը: Սակայն նկատելի է, որ քոլեջը չունի դասախոսական կազմի կայունությունը ապահովող հստակ մշակված քաղաքականություն: Դասախոսական կազմի միջին տարիքը բարձր է: Մեկ առարկայի համար հիմնականում մեկ դասավանդող է առկա, և տարածաշրջանային առանձնահատկություններից ելնելով՝ երբեմն դժվարություն է առաջանում քոլեջի համար նեղ մասնագիտական առարկաների դասավանդողներ գտնելը: Քոլեջում առկա չէ նաև պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման քաղաքականություն:

Քոլեջում աշխատակազմի հոսունություն գրեթե չկա:

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման տեսանկյունից քոլեջում չի կիրառվում հստակ քաղաքականություն: Քոլեջը չունի դասախոսների ներքին և

արտաքին գնահատման կանոնակարգված պարբերականություն: Սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքները հիմնականում իրականացում են ամբիոնները և ուսումնական մասը:

Այսպիսով, դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ուղղությամբ քոլեջում համակարգված մեխանիզմներ և ընթացակարգեր չկան:

Ըստ ինքնավերլուծության քոլեջի ուսումնական գործընթացը կազմակերպում և անմիջականորեն համակարգում են ուսումնական մասը, ամբիոնները: Ուսումնառության և դասավանդման գործընթացի իրականացմանը նպաստում և օժանդակում են վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմերը: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ուսումնաօժանդակ կազմի ընտրության հստակ չափանիշներ, ինչպես նաև այս ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման հստակ կարգեր քոլեջում դեռևս չկան: Բոլոր օղակները գործում են հիմք ընդունելով կանոնակարգող փաստաթղթերը:

Չնայած նրան, որ քոլեջում առկա չէ ՊԴ կազմի գնահատման, խրախուսման քաղաքականություն, քոլեջի ՊԴ կազմի միջին տարիքը բավականին բարձր է և անհրաժեշտ է նախաձեռնել ՊԴ կազմի երիտասարդացմանն ուղղված անհրաժեշտ քայլեր, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ քոլեջում առկա են դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, մշակված են պաշտոնի անձնագրեր, ՄԿԾ-ների իրականացման համար առկա է համապատասխան դասախոսական կազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը ընդհանուր առմամբ բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի գյուղատնտեսական քոլեջը հետազոտությունների իրականացումը ռազմավարական խնդիր չի դիտարկվում: Քոլեջում մշակված չեն հետազոտության իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր, սահմանված չեն քոլեջի համար գերակա համարվող գյուղատնտեսության ոլորտում հետազոտական ուղղություններ: Այդուհանդերձ, քոլեջն ունի տարածաշրջանային նշանակություն և որպես տարածաշրջանային հետազոտական և կրթական կարևոր կենտրոն կարող է հնարավորություններ ստեղծել գյուղատնտեսության տարածաշրջանային հետազոտությունների նախաձեռնման և այս գործունեության հետագա զարգացման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում նախատեսվում է ունենալ ուսանողների և դասախոսների կողմից կատարված լավագույն նորարարական աշխատանքները և գյուտերը արտադրությունում կիրառելու ունակություններով օժտված խումբ, որը լավագույն գյուտերը և նորարարությունները կօգնի կիրառելու գյուղատնտեսության բնագավառում: Այդուհանդերձ, փորձագիտական այցի ընթացքում ևս պարզ դարձավ, որ այս ուղղությամբ աշխատանքներ քոլեջի կողմից դեռևս չեն իրականացվում:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև, որ քոլեջի դասախոսները իրենց մասնակցությունն են ունեցել նաև ՌԶԳ-ի հետ համատեղ «Կաթի, կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն» մասնագիտությունների ձեռնարկների հրատարակման գործընթացում[8]:

Ռազմավարական զարգացման գործակալության «Անասնապահության զարգացումը Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակներում Բեռնի համալսարանի գյուղատնտեսական, անտառային և պարենային գիտությունների դպրոցի HAFL–ի կողմից, որպես օգնություն, քոլեջին տրամադրվել է անասնաբուժության նշանակության սարքավորումներով և կահավորանքով համալրված ժամանակակից լաբորատորիա, ինչպես նաև «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակներում ավարտին է մոտենում «Կաթի և կաթնամթերի մշակման» լաբորատորիայի կառուցման և ձևավորման աշխատանքները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2 լաբորատորիաներն էլ կահավորված են, և ուսումնական պարապմունքներն անցկացվում են այդ լաբորատորիաներում, սակայն ուսումնառությունը հետազոտության հետ կապելու մեխանիզմներ քոլեջում դեռևս առկա չեն, որոնք թույլ կտային իրականացված արդյունքները ներդնել դասավանդման և ուսումնառության գործընթացներում:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և շահակիցների հետ ունեցած հանդիպումներից ևս պարզ է դառնում, որ քոլեջը չի խթանում դասախոսական կազմի հետազոտական գործունեությունը, ինչպես նաև առկա չեն համապատասխան պայմաններ հետազոտական գործունեությամբ զբաղվելու համար: Քոլեջում տեղական և միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող մեխանիզմների անհրաժեշտություն կա, ինչ կնպաստի նաև ուսանողների և դասախոսների մոտիվացիայի բարձրացմանը, հնարավորություններ կստեղծի մասնակցելու միջազգային գիտամեթոդական կոնֆերանսներին, մրցույթներին ու ցուցահանդեսներին, տպագրվելու մասնագիտական ամսագրերում:

Հաշվի առնելով, որ քոլեջում առկա չէ հետազոտական ոլորտում հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, դասախոսներն ու ուսանողները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, ուսանողների մոտ վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորմանն ուղղված գործընթացներ, ինչպես նաև

[8] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ առկա չեն, փորձագիտական խումբը գտնում է, որ Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը իր ռազմավարական ծրագրում որպես հիմնախնդիր սահմանել է. «Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար»: Քոլեջի ռազմավարական ծրագրով նախատեսված է, որ վերոնշյալ խնդրի լուծման համար հաստատությունը պետք է ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կատարելագործման միջոցով ապահովի ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործումը և բարելավի ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները: Սակայն, փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերոնշյալի իրականացնման համար քոլեջը չի հատկացնում համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար: Առկա չէ ռազմավարական առաջնահերթությունների իրականացման ֆինանսական բաշխման հստակ քաղաքականություն, պլանավորում, ինչպես նաև փորձագիտական խմբի կողմից դիտարկված հաշվետվություններում չկան հստակ ֆինանսական հատկացումներ:

Հաստատության շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է՝ վարչական շենքը՝ 730.1 ք.մ, արտադրական նոր կորպուսը՝ 1445 ք.մ: Քոլեջը կրթական ծրագրեր կազմակերպում է վարչական շենքում՝ 14 լսարաններում: Ուսումնական տարածքը լիովին բավարարում է լիցենզավորման համար ՀՀ կառավարության կողմից ներկայացվող մեկ ուսանողին բաժին ընկնող մակերեսի չափով պահանջներին: Երկու մասնաշենքերը հանդիսանում են պետության սեփականություն, որոնք քոլեջին տրված են անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով: Քոլեջի արտադրական նոր կորպուսը, որը ոչ բարվոք վիճակում է, նախատեսված է որպես արհեստանոց: Եվրամիության՝ քոլեջների մասնագիտական զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգման աշխատանքներ կատարել արտադրական նոր կորպուսում:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձեռքբերմանը համահունչ նյութատեխնիկական ռեսուրսներով քոլեջը դեռևս ամբողջովին ապահովված չէ, նյութատեխնիկական բազան համալրման կարիք ունի[9]:

Մասնագիտությունների ուսումնական ծրագրերին համապատասխան հաստատությունն ունի կաթի, կաթնամթերքի արդիական լաբորատորիա՝ «Կաթի, կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության համար, ինչպես նաև «Անասնաբուժություն» մասնագիտության համար անասնաբուժական կաբինետ: Անասնաբուժական կաբինետի արդիականացման ուղղությամբ քոլեջը որոշակի քայլեր է կատարում:

Քոլեջը համագործակցում է տարածաշրջանի ոլորտային գործատուների և այլ հաստատությունների հետ՝ նրանց ռեսուրսային բազաները քոլեջի կրթական ծրագրերի կարիքներին ծառայեցնելու համար: Ըստ ինքնավերլուծության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քոլեջը համագործակցության պայմանագրեր է կնքում մասնագիտական, արտադրական պրակտիկայի անցկացման համար տարբեր հեղինակային լաբորատորիաների, արտադրամասերի, տեղական համայնքների հետ աջակցում ուսանողների մասնագիտական կայացման գործընթացին:

Ըստ հաստատության ինքնավերլուծության՝ քոլեջի գրադարանը առաջատար կառուցվածքային ստորաբաժանումներից է և իր գործունեությունը ծավալում է ղեկավարվելով գրադարանային աշխատանքային պլանի, կանոնակարգի և տեղեկատվության մասին ՀՀ օրենքով ու քոլեջի կանոնադրությամբ: Գրադարանը իր հնարավորությունների սահմանում կարողանում է ապահովել ուսումնական պրոցեսը գրականությամբ: Գրադարանի պահոցները գտնվում են անմխիթար վիճակում՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով: Քոլեջը չունի բավարար թվով ժամանակակից մասնագիտական գրականություն, առցանց պատվերի համակարգ: Միայն «Կաթի, կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն» մասնագիտությունների համար առկա է որոշակի քանակությամբ մասնագիտական գրականություն, որը ձեռք է բերվել Ռազմավարական զարգացման գործակալության հետ համագործակցության արդյունքում:

Ըստ ինքնավերլուծության՝ դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման և ուսումնական միջավայրի արդյունավետության բարձրացման նպատակով մշտապես իրականացվում են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, ձեռք է բերվում նոր համակարգչային տեխնիկա և սարքավորումներ, ինչպես նաև համալրվում է գրադարանային ֆոնդը: Սակայն, վերջին տարիներին գրադարանային ֆոնդի համալրման նպատակով քոլեջը միջոցներ չի հատկացրել, որպես նվիրատվություն ստացել է որոշ քանակությամբ գրքեր:

Հաստատության տարածքն ապահովված է WiFi ծածկույթով:

Քոլեջի ուսանողների և դասախոսների հանգստի կազմակերպման, սննդի ծառայություն համար ճաշարան չի գործում:

---

[9] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

Քոլեջի ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում են պետական բյուջեից (ըստ տարիների՝ 2013թ.՝ 92.5%, 2014թ.՝ 96%, 2015թ.՝ 95.8%, 2016թ.՝ 95.9%, 2017թ.՝ 97.1%): այլընտրանքային ֆինանսական աղբյուրները շատ քիչ են:

Հաստատությունը չունի ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ, չի իրականացվում ֆինանսական հատկացումների հիմնավորում և ծախսերի արդյունավետության վերլուծություն:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի ծախսերի պլանավորման ժամանակ հաշվի են առնվում քոլեջի ստորաբաժանումների կողմից իրենց կարիքների համար ներկայացվող հայտերը: Հաստատությունը ռեսուրսների բաշխման մեխանիզմ է համարում նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների գնումը քոլեջի գնումների և մատակարարման բաժնի կողմից: Համաձայն ինքնավերլուծության՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ուսմասվարը քոլեջի ղեկավարությանն է ներկայացնում հաջորդ տարվա ուսումնական ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա էլ կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը:

Հաստատությունը չունի գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացման ու շարունակականության ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և շարունակականության ապահովման նպատակով չի կատարում ֆինանսական հոսքերի բազմազանեցում: Կրթական ծրագրերի շարունակականության ապահովման տեսանկյունից քոլեջի ֆինանսավորման համակարգը կայուն է, քանի որ հաստատության հիմնական ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից:

Քոլեջում առկա ռեսուրսները ուսանողների թվի համեմատ քանակի առումով բավարար չեն գործնական պարապմունքների, պրակտիկաների և վերջնարդյունքներին համապատասխան գնահատում կազմակերպելու տեսանկյունից:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը չի իրականացնում նյութատեխնիկական բազայի բարելավման, համալրման, վերազինման և թարմացման հստակ պլանավորում, ինչպես նաև որևէ գործիքակազմով վեր հանված չեն հաստատությունն ներքին շահակիցների կարիքները:

Քոլեջը չունի տեղեկատվությունը կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ: Հաստատությունը 2012թ.-ին ձեռք է բերել «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, որը, սակայն, նախատեսված չէ ներքին փաստաթղթաշրջանառության համար: Հաստատությունը չունի նաև տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները կարգավորող կանոնակարգ:

Քոլեջում սկսել է գործել բուժկետ անհրաժեշտության դեպքում բժշկական սպասարկում իրականացնելու համար: Քոլեջը համագործակցում է նաև Գորիս քաղաքի Ս. Ամիրյանի անվան պոլիկլինիկայի հետ: Տարին մեկ անգամ քոլեջը ֆինանսավորում է յուրաքանչյուր աշխատողին 3000 դրամ գումար տարեկան բժշկական ստուգումներ կազմակերպելու համար: Քոլեջը համաճարակային վարակներից խուսափելու նպատակով

համագործակցում է նաև «Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գորիսի մասնաճյուղի հետ:

Անվտանգության պահպանման համար քոլեջի մասնաշենքում հսկողությունն իրականացվում է տեսահսկման սարքերի օգտագործմամբ, ինչպես նաև շուրջօրյա հսկողությամբ՝ ներառելով 4 գիշերային պահակների և մեկ բակապահի: Քոլեջի ներքին հակահրդեհային ծառայության ապահովման նպատակով քոլեջի հարկաբաժիններում տեղադրված են կրակմարիչներ, հատուկ գործիքներ: Հաստատության վարչական շենքը երկհարկանի է, և երկու հարկում էլ փակցված են տարահանման պլանները: Հաստատության ենթակառուցվածքային պայմանները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և դասախոսների կարիքներին, հաստատությունը նման ուսանողների և դասախոսների համար գրավիչ լինելու ուղղությամբ քայլեր չի ձեռնարկում:

Հաստատությունը որևէ գործիքակազմով հարցումներ չի իրականացնում անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետության աստիճանը պարզելու ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ հաստատությունը չի իրականացնում ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատում, բարելավման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քոլեջը իր կողմից իրականացվող կրթական ծրագրերի վերջնարդյունքների ապահովման համար ապահովված չէ անհրաժեշտ ռեսուրսներով՝ չնայած որ քայլեր է ձեռնարկում նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ՝ նախատեսելով նոր վերանորոգված ու վերազինված շենքի կառուցում, ֆինանսական պլանավորումը չի իրականացնում բացահայտված կարիքների հիման վրա, չունի փաստաթղթաշրջանառության ներքին համակարգ, չունի համապատասխան ենթակառուցվածքներ հատուկ կարիքներ ունեցող շահակիցների համար, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը չի բավարարում Չափանիշ 7-ի պահանջները՝ շեշտադրելով, որ քոլեջը այս ուղղությամբ քայլեր իրականացնում է, սակայն անհրաժեշտություն է առաջանում գործընթացները իրականացնելիս հաշվի առնել առկա վիճակը, հնարավոր վտանգներն ու հնարավորությունները և ֆինանսական պլանավորումն իրականացնել՝ ռազմավարական առաջնահերթություններից ելնելով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի գյուղատնտեսական քոլեջի ռազմավարական խնդիրներից է հասարակայնության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում քոլեջի ակտիվ ներգրավումը: Քոլեջն ունի հանրային կապերի կանոնակարգ: Յուրաքանչյուր ամբիոնի կողմից ամեն տարի կազմվում է աշխատանքային ծրագիր, որը ներկայացվում է աշխատանքային պլանի տեսքով՝ նշելով աշխատանքների կազմակերպման և նախապատրաստման, նոր լույս տեսած մասնագիտական գրականության շուրջ քննարկումների, դիպլոմային և կուրսային նախագծերի և աշխատանքների թեմաների կազմման, ընթացիկ և պետական քննությունների նախապատրաստման և անցկացման մասին, հստակեցվում են ժամանակացույցերը: Կատարված աշխատանքները ներկայացվում են ամբիոնների տարեվերջյան հաշվետվություններում: Քոլեջը, ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սահմանված կարգի, որոշակի ժամանակահատվածում հաշվետվություններ է ներկայացնում նախարարության տարբեր տորաբաժանումներին:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջում առկա է դիմորդների ընդունելության համար մասնագիտությունները նկարագրող ուղեցույց, ինչպես նաև քոլեջում պարբերաբար կազմվում է աշխատանքային խումբ, որը շուրջ մեկ ամիս շրջագայում է տարածաշրջանի գյուղական վայրերով, այցելում դպրոցներ և տներ՝ պոտենցիալ դիմորդների հետ համապատասխան աշխատանքներ տանելու և նրանց քոլեջի դասընթացներում ընդգրկելու համար: Սակայն ուսումնասիրելով հաստատության պաշտոնական կայքը, որը նորաստեղծ է և սակավ ինֆորմացիա է պարունակում, ու ֆեյսբուքյան էջը, նկատելի է, որ քոլեջի ընթացակարգերի և գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը ամբողջական չէ, ինչ կարող է հանգեցնել քոլեջի գործընթացների մասին թափանցիկության ապահովմանը և հաշվետվողականության գործընթացների ապահովմանը:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի ուսանողներն ու աշխատակիցները, դիմորդներն ու շրջանավարտները, ինչպես նաև հասարակայնության ներկայացուցիչները մեծ թվով հարցեր են ուղղում, որոնք կուտակվում են առաջարկների և բողոքների արկղում, ստանում պատասխաններ, թողնում կարծիքներ և գնահատականներ քոլեջի գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ, ինչպես նաև հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքներից են համարվում հասարակական կարծիքի ուսումնասիրման տարբեր հարցումները, ուսանողական խորհուրդը ստանում է արձագանքներ հասարակական լայն շերտերից և դրանք ներկայացնում քոլեջի կառավարման մարմիններին: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում առաջարկների և բողոքների արկղի տեղադրումը դեռևս պլանավորման փուլում է, իսկ հարցումները պարբերական բնույթ չեն կրում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում առկա են որոշ մեխանիզմներ, որոնցով ապահովվում է հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապը: Այդպիսի մեխանիզմներ են տարբեր տպագրված բուկլետները, որոնք տարածաշրջանի դպրոցներ այցի ժամանակ բաժանվում են, քոլեջի նոր կայքում առկա է հետադարձ կապի հնարավորություն, ինչպես նաև Մայիսի 11-ը հայտարարված է ամենամյա Մասնագիտությունների օր, որի ընթացքում քոլեջը ներկայացնում է իր մասնագիտությունները, ձեռքբերումները, ինչպես նաև կազմակերպում են հյուրասիրություն իրենց ուսանողների կողմից պատրաստված պանրի տեսականուց: Ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ գրեթե բոլորը տեղյակ են Մասնագիտությունների օրվա մասին:

Ըստ քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության՝ հասարակությանը գիտելիքների փոխանցման մեխանիզմներ չկան, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կազմակերպվել է կաթի և կաթնամթերքի բնագավառում կարճաժամկետ անվճար դասընթացներ, ինչպես նաև դասընթացներ տրակտորիստ–մեքենավարների պատրաստման ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ նշված գործընթացները համակարգային և հստակ պլանավորված լինելու դեպքում կարող են նպաստել քոլեջի՝ հասրակության հետ կայուն կապերի ձևավորմանը, քոլեջի գործունեության մասին հանրության առավել լայն շերտերին իրազեկմանը:

Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է հաշվետվողականության համակարգ, առկա են գործընթացները հասարակությանը հասանելի դարձնելու մեխանիզմեր, որոնք իհարկե կատարելագործման կարիք ունեն, փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը բավարարում է Չափանիշ 8-ի պահանջները՝ անհրաժեշտություն համարելով կանոնակարգել ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման գործընթացները՝ նպաստելով քոլեջի մասին տեղեկատվության տարածմանը, տեղացի և միջազգային կազմակերպությունների ու կառույցների հետ կապերի ձևավորմանն ու քոլեջում ընթացող գործընթացների վերաբերյալ թափանցիկության բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Գորիսի գյուղատնտեսական քոլեջի ինքնավերլուծության համաձայն՝ հաստատությունը կարևորում է արտաքին կապերի ձևավորման ու միջազգայնացման գործընթացները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում արտաքին

կապերի ձևավորման և ամրապնդման համար առկա չեն արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Գորիսի գյուղատնտեսական քոլեջը «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ և Բեռնի համալսարանի հետ համագործակցության պայմանագրեր է կնքել: «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի «Անասնապահության զարգացումը Հայաստանի հարավում» ծրագրի շրջանակներում, Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, այն ձեռք է բերել ժամանակակից սարքավորումներով, նյութերով և գույքով հագեցած անասնաբուժական լաբորատորիա: Քոլեջը համագործակցում է նաև հասարակական կազմակերպությունների (Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն, Գործընկերություն և ուսուցում, Թթենի համագործակցություն, Մաքուր Գորիս և այլն) և զբաղվածության տարածքային կենտրոնների հետ[10]: Բայց համագործակցության արդյունքների գնահատում և վերլուծություն քոլեջի կողմից չի իրականացվել: Փորձագիտական խումբը նաև կարևորում է այն հանգամանքը, որ քոլեջը այլընտրանքային հնարավորություններ չի փնտրում, ինչպես նաև քոլեջում դեռևս չի ձևավորվել արտաքին կապերի իրականացումը ապահովող և կանոնակարգող ենթակառուցվածք, ինչը վտանգում է հաստատության նախաձեռնած գործընթացների շարունակականությունը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն հանգամանքը, որ քոլեջում առկա չեն վերոնշյալ գործընթացների կայուն իրականացումն ապահովող գործիքակազմեր[11]:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը համագործակցում է Ջի Այ Զեթի և Էլոլա ձեռնարկության հետ, սակայն այս համագործակցության արդյունավետությունը ևս քոլեջի կողմից չի գնահատվել: Վիեն-Գորիս քույր քաղաքների համագործակցության շրջանակներում, Գորիսի քաղաքապետարանի և Վիեն քաղաքի քաղաքապետարանի աջակցությամբ, երկու տարի շարունակ, ֆրանսիական Վիեն քաղաքի Ագրոտեկ քոլեջի 33 ուսանողներ՝ 6 դասախոսների ուղեկցությամբ, իրենց պրակտիկան են անցկացրել քոլեջում: Փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ ըստ քոլեջի ներքին շահակիցների՝ սա փորձի փոխանակման մեծ հնարավորություն էր քոլեջի համար, սակայն այս գործընթացը ևս շարունակական բնույթ չի կրել, և քոլեջի կողմից էլ հստակ գործողություններ չեն իրականացվել նոր համագործակցությունների նախաձեռնության ուղղությամբ:

Ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակն ապահովելու նպատակով հաստատությունը նույնպես հստակ ձևավորված քաղաքականություն չունի: Սակավաթիվ են օտար լեզուների դասընթացները և դրանց

---

[10] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

[11] Տեքստը վերաշարադրվել է հաստատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքնում:

արդյունավետությունը նույնպես քոլեջի կողմից չի գնահատվել: Օտար լեզուների իմացության ցածր մակարդակը կարող է խոչընդոտ հանդիսանալ ուսանողների և դասախոսների շարժունության իրականացման, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հաստատման վրա:

Հաշվի առնելով, որ քոլեջում բացակայում են արտաքին կապերի խրախուսման իրականացնող մեխանիզմները, ցածր է ուսանողների և դասախոսների՝ օտար լեզվի իմացության մակարդակը, դասախոսների և ուսանողների ներքին և արտաքին շարժունություն առկա չէ, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետության գնահատում չի իրականացվում քոլեջի կողմից՝ փորձագիտական խումբը Չափանիշ 9-ինստիտուցիոնալ կարողությունները գնահատում է անբավարար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության համաձայն՝ հաստատությունը նախատեսում է որակի ապահովման ներքին համակարգ ձևավորել, ինչպես նաև քոլեջում ձևավորվել է որակի ապահովման մշտական հանձնաժողով, որը ունի իր աշխատակարգը: Որակի ապահովման բաժինը ստեղծվել է մեթոդաբանական և այլ փաստաթղթերի հիմքերի մշակման և կատարելագործման նպատակով: Սակայն քոլեջում չեն մշակվել որակի ապահովման ընթացակարգեր և մեխանիզմներ: Իսկ փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2017 թ.-ից ստեղծված որակի ապահովման կենտրոնը այլևս չի գործում, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների իրականացման համար ֆինանսական ռեսուրսներ չեն հատկացվում:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջը որակի ապահովման գործընթացներում փորձում է ներգրավել ներքին (համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, դասախոսական անձնակազմ, ուսանողներ և վարչական աշխատողներ) և արտաքին շահակիցներին: Արտաքին շահակիցները ներգրավված են պետական քննական հանձնաժողովներում, կառավարման խորհրդում: Որոշ շահակիցների (ուսանողներ և շրջանավարտներ) համար գործում է հարցումների անցկացման ընթացակարգը, որի միջոցով ուսանողները ներկայացնում են կրթական որակի, ինչպես նաև դասախոսական կազմից իրենց բավարարվածության աստիճանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում որակի ապահովման գործընթացները չեն իրականացվում «պլանավորում–իրականացում–գնահատում-բարելավում» շրջափուլով, ինչը վտանգում է որակի շարունակական բարելավումը և արդյունավետության բարձրացումը: Որակի ապահովման ներքին համակարգը արտաքին գնահատման նպատակով ինքնավերլուծության ներկայացման միջոցով փորձել է ապահովել բավարար հիմքեր, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ինքնավերլուծությունը հնարավորություն չէր տալիս համակողմանիորեն հասկանալ քոլեջում առկա իրավիճակը, ինչպես նաև որոշ տվյալներ թարմացման և համալրման կարիք ունեն:

Քոլեջի կայքում և այլ սոցիալական հարթակներում որակի ներքին ապահովման համակարգի կողմից տրամադրված տեղեկատվությունը նույնպես վերանայման և ամբողջականացման կարիք ունի, ինչը կնպաստի քոլեջի հաշվետվողականության ավելացմանն ու թափանցիկության բարձրացմանը:

Հաշվի առնելով, որ քոլեջում որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրականացման համար առկա չեն համապատասխան մեխանիզմներ, ներքին և արտաքին շահակիցների մասնակցության մակարդակը ցածր է, քոլեջում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի ցուցիչներ առկա չեն, և որակի ապահովման համակարգը դեռևս չի ապահովում քոլեջում տեղի ունեցող գործընթացների թափանցիկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը չի բավարարում Չափանիշ 10-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ծաղիկ Հովհաննիսյան
Փորձագիտական խմբի ղեկավար

26 փետրվար 2020

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Ծաղիկ Հովհաննիսյան՝** 2007թ.-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը՝ «Ինֆորմատիկա և կոմպյուտերային համակարգեր» մասնագիտությամբ: 2007-2009թթ. լաբորանտ, համատեղությամբ դասախոս է աշխատել «Հաշվողական տեխնիկա» ամբիոնում: 2009թ.-2017թթ. դասախոսել է ՀՊՃՀ «Քոմփյութերային համակարգեր և ինֆորմատիկա» ֆակուլտետի «Քոմփյութերային համակարգեր և ցանցեր» ամբիոնում: 2017թ.-ին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 2017թ. հոկտեմբերից զբաղեցում է ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը: 2017թ.-ի հոկտեմբերից նույն ինստիտուտի «Քոմփյութերային համակարգեր և ցանցեր» ամբիոնի ասիստենտ է, 2018թ.-ի օգոստոսից՝ նույն ամբիոնի դոցենտ: Հեղինակել և համահեղինակել է մի շարք գիտական հոդվածներ:
2. **Ախիմ Ալբրեխտ՝** Եվրոպական և միջազգային բիզնես իրավունքի պրոֆեսոր է Գերմանիայի Վեստֆալիայի համալսարանում: Մասանգիտացված է միջազգային բիզնեսի իրավունքի, միջին մասնագիտական կրթության, համալսարանների ռազմավարական զարգացման ոլորտներում: Մի շարք հավատարմագրման գործընթացներում ներգրավված է եղել որպես փորձագետ: Բիզնես իրավունքի ոլորտում 363 հրապարակումների հեղինակ է:
3. **Գայանե Արաբաչյան՝** 1988 թվականին ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը «Ինժեներ-տեխնոլոգ» մասնագիտությամբ: 1990-2009 թվականներին դասախոսել է Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջում, 2009-2019 թվականներին զուգահեռաբար ղեկավարել է սոցիալ-բնագիտական առարկաների ամբիոնը: 2019 թվականի սեպտեմբերից Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենն է: Մասնակցել է տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ՄԿՈՒ համակարգի բարելավմանն ուղղված մի շարք դասընթացների ու սեմինարների:
4. **Սերգեյ Ավանեսյան՝** 2006 թվականին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը «Ինֆորմատիկա» մասնագիտությամբ: Այժմ սովորում է Գորիսի պետական համալսարանում, «Կրթության կառավարում» մասնագիտությամբ մագիստրանտ է: 2005-2009 թվականներին եղել է Գորիսի պետական քոլեջի համակարգչային լաբորատորիայի վարիչ, 2009-2017 թվականներին դասախոսել է նույն քոլեջում, 2017-ից քոլեջի՝ ուսումնական գծով փոխտնօրենն է: 2014-ից մինչ այժմ «Goris Media Group» լրատվական-վերլուծական-ժամանցային ակումբի գլխավոր խմբագիրն է, 2017-ից մինչ այժմ «Սանդի Զոր» համատիրության նախագահն է:
5. **Արթուր Դավթյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող է: Մասնակցել է ՈԱԱԿ

«Ուսանողնության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

13.01.2020թ.-15.01.2020թ.

	13.01.2020 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:00	09:30	30 րոպե
2.	Հանդիպում քոլեջի Կառավարման խորհրդի կազմի հետ	09:40	10:10	30 րոպե
3.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	10:20	11:00	40 րոպե
4.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ (8-10 մասնակից)	11:10	11:50	40 րոպե
5.	Հանդիպում վարչական ստորաբաժանումների ղեկավարների հետ	12:00	12:40	40 րոպե
6.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
7.	Հանդիպում շրջանավարտների հետ (8-12 շրջանավարտ)	14:00	15:00	60 րոպե
8.	Հանդիպում գործատուների հետ (8-12 գործատու)	15:10	16:10	60 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	18:00	100 րոպե

	14.01.2020 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1.	Հանդիպում ամբիոնների (ցիկլային հանձնաժողովների ղեկավարների) վարիչների հետ (ներառյալ ինքնավերլուծությունում ներկայացված ՄԿԾ-ներն իրականացնող մասնագիտական ամբիոնների /ցիկլային հանձնաժողովների վարիչները)	09:00	10:00	60 րոպե

2.	Հանդիպում դասախոսական կազմի հետ (8-12 դասախոս՝ ներառյալ ինքնավերլուծության մեջ ներկայացված ՄԿԾ-ները)	10:10	11:10	60 րոպե
3.	Այցելություն ամբիոններ/ցիկլային հանձնաժողովներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	11:20	12:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Այցելություն քոլեջի ստորաբաժանումներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	13:40	15:40	120 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:50	17:00	140 րոպե

	15.01.2020թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ (8-12 ուսանող)	09:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում առկա համակարգում սովորող ուսանողների հետ (առկա, 8-12 ուսանող)	10:10	11:10	60 րոպե
3.	Հանդիպում հեռակա համակարգում սովորող ուսանողների հետ (8-12 ուսանող)	11:20	12:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	13:40	14:10	30 րոպե
6.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, մարզասրահներ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, բուժկետ, բուֆետ)	14:30	15:30	60 րոպե
7.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	15:40	16:20	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	17:30	60 րոպե

9.	Ամփոփիչ հանդիպում քոլեջի տնօրենի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Քոլեջի 2017-2021թթ. ռազմավարական ծրագիր	1
2.	2018-2019թթ. Տարեկան գործողությունների պլան	1
3.	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ (2016-2019 թթ.)	2
4.	ՈւԽ նիստերի արձանագրություններ (2016-2019 թթ.)	2
5.	Մանկավարժական խորհրդի արձանագրություններ	2
6.	Ամբիոնների գործողության պլաններ	2
7.	Պաշտոնի անձնագրեր	2
8.	Տնօրենի հաշվետվություններ վերջին երեք տարիների համար	2
9.	Կառավարման խորհրհրդի նիստերի արձանագրություններ	2
10.	Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ	2
11.	Էթիկայի և վարվելակերպի կանոններ	2
12.	Ուսումնական գծով փոխտնօրենի և ուսումնաարտադրական գծով փոխտնօրենի աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
13.	Մասնագիտական կրթական ծրագրեր	3
14.	Դասացուցակներ	3
15.	Թեմատիկ պլաններ	3
16.	Առարկայական ծրագրեր	3
17.	Դասալսումների մատյաններ	3
18.	Դիպլոմի և դիպլոմի հավելվածի օրինակներ	3

19.	Ուսումնական պլաններ	3
20.	Օրացուցային պլաններ	3
21.	Պետական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ	3
22.	Քոլեջի ուսանողական խորհրդի կանոնադրություն	4
23.	ՈւԽ աշխատանքային պլան	4
24.	ՈւԽ նախագահի հաշվետվություն (2018-2019թթ.)	4
25.	Ուսանողների անձնական գործեր	4
26.	Կարիերայի կենտրոնի աշխատանքային պլան և հաշվետվություններ	4
27.	Կուրսային և դիպլոմային աշխատանքներ	4
28.	Պրակտիկայի օրագրեր	4
29.	Դասախոսական կազմի վերապատրաստումների սերտիֆիկատներ	5
30.	Դասախոսների անձնական գործեր	5
31.	Դասախոսական և վարչական անձնակազմի ընտրության կարգ	5
32.	Կուրսղեկների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	5
33.	Դասալսումների մատյաններ և արձանագրություններ	5
34.	Գնումների պլան	7
35.	Ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումների անցկացման կանոնակարգեր	10
36.	Ուսանողների շրջանում իրականացվող հարցումների օրինակներ	10
37.	Գործատուների շրջանում իրականացվող հարցումների օրինակներ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ամբիոններ (Տնտեսագիտության առարկաների և մոդուլների, Գյուղատնտեսության, Հանրակրթական առարկաների, Գյուղմեքենայացման մասնագիտական, տեխնիկական առարկաների, մոդուլների ամբիոններ)
2. Ստորաբաժանումներ (Ուսումնական մաս, Հաշվապահություն, Կարիերայի ուղղորդման կենտրոն)
3. Լսարաններ (Ճանապարհային երթևեկության, ռազմագիտության կաբինետներ)
4. Լաբորատորիաներ (Կաթի, կաթնամթերքի, Գյուղատնտեսության մեքենայացման, Անասնաբուժության լաբորատորիաներ)
5. Բուժկետ
6. Ճաշարան
7. Գրադարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԿԾ- մասնագիտական կրթական ծրագիր

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ